ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

GOUVERNEMENT
D'ARMENIE OCCIDENTALE

BATI ERMENISTAN
HUKUMETI

ПРАВИТЕЛЬСТВО
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

ՈՐՈՇՈՒՄ

ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի իրավահաջորդության մասի զիջման և ընդունման մասին

ՆԱԽԱԲԱՆ

«Պետության եւ հասարակության միջեւ կնքված է, առկա է քաղաքացիական պայմանագիր, որով իրականացվում է պետության կողմից հասարակության կառավարումը». Պլատոն:

-20-րդ դարի սկզբին հայ ժողովուրդը անցնելով հնարավոր բոլոր փորձությունների միջով, 1918թ. մայիսի 28-ին հռչակեց Հայաստանի Դեմոկրատական Հանրապետությունը:

-1920թ. օգոստոսի 4-ին հռչակվեց Կիլիկյան Հայաստանի անկախությունը:

-1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն Խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հայաստանի Անկախության Հռչակագիրը»,

-1991 թ. սեպտեմբերի 2-ին հայտարարվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին:

-2011 թ. փետրվարի 4-ին հայտարարվեց Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության հռչակման մասին:

2011թ.հուլիսին 23-ին Հայաստանի Հանրապետության նախագահը Ծաղկաձորում Հայոց լեզվի, գրականության եւ հայագիտական գիտելիքների համահայկական 5-րդ օլիմպիադայի մասնակիցների հետ կայացած հանդիպման ժամանակ հայրենատիրության խնդրո հետ կապված սույն հարցադրումներին. «...Մեզ սպասվում է ապագա, որը հիշեցնելու է Բաթումի պայմանագի՞րը, որի ժամանակ մի գերմանացի դիվանագետի վկայությամբ՝ մեզ Սեւանում լողանալու տեղ թողեցին, սակայն չորանալու տեղ չթողեցին, թե՞ ապագա, որը մեզ կվերադարձնի Արեւմտյան Հայաստանը՝ Արարատով հանդերձ», հանդես եկավ հրապարակային հայտարարություն-ուղերձով. «Այդ ամբողջը կախված է քեզնից եւ քո սերնդից: Իմ սերունդը, կարծում եմ, իր առջեւ դրած պարտականությունը կատարեց, երբ 90-ական թվականների սկզբներին

անհրաժեշտ էր մեր հայրենիքի հատվածներից մեկը՝ Ղարաբաղը պաշտպանել թշնամիներից, մենք կարողացանք դա անել: Եւ ես սա ասում եմ ոչ նրա համար, որ որեւէ մեկին կշտամբեմ: Ուզում եմ ասել, որ յուրաքանչյուր սերունդ իր պարտականությունն ունի, եւ այդ պարտականությունը պետք է կարողանա կատարել ու՝ լավ կատարել: Եթե դու եւ քո հասակակիցները ջանք ու եռանդ չխնայեք, եթե ձեզնից ավագներն ու ձեզնից կրտսերները ձեզ նման վարվեն՝ մենք ունենալու ենք աշխարհի լավագույն երկրներից մեկը»:

Սույն հայտարարություն-ուղերձով ՀՀ նախագահը Հայոց հայրենատիրության պահանջը ԹՈՂՆՈՒՄ Է, ԶԻՋՈՒՄ Է, ՓՈԽԱՆՑՈՒՄ Է սերունդներին /ժառանգներին/՝ «ավագներին եւ կրտսերներին»: Իրավահաջորդության մասի զիջումը իրականացվել է հայտարարություն-ուղերձով, համաշխարհային հանրությանը եւ հայությանը մատչելի, հասանելի միջոցով, այն է՝ ԶԼՄ-ներով:

ՄԱՍ 1-ԻՆ

Բոլորը պարտավոր են հարգելու մարդու իրավունքները: Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են, առանց որեւէ խտրականության եւ օրենքի հավասար պաշտպանության իրավունք ունեն /ՄԱԿ-ի 10.12.1948թ. Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիր՝ 7-րդ հոդ., Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին Եւրոպական Կոնվենցիա՝ 1-ին հոդ., 3րդ հոդ., ՀՀ ՍԴ 17 հոդ.: Անհատի, ինչպես նաեւ հավաքական խմբի, ազգի քաղաքացիական, քաղաքական իրավունքների պաշտպանությունը իրականացվում է. 1/ իրավունքի ճանաչումով:

-1917թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի Կառավարությունը դեկրետով ճանաչել է Հայ ժողովրդի «Թուրքահայաստան» /Արեւմտյան Հայաստան/ պետություն ունենալու իրավունքը,

-1920թ. հունվարի 19-ին Անտանտի Գերագույն Խորհուրդը ճանաչել է Հայաստանի անկախությունը,

-1920թ. Սեւրի դաշնագիրը ստորագրած աշխարհի 18 պետություն ճանաչել են հայ ժողովրդի Հայաստան պետության ունենալու իրավունքը եւ այդ փաստն արձանագրված է նույն դաշնագրի 89-92 հոդվածներում,

-1920թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ պետության անունից ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնը կայացրեց Իրավարար վճիռ, որով ճանաչեց Հայաստան պետությունը՝ քարտեզագրված սահմանով,

-1960թ. դեկտեմբերի 14-ին ՄԱԿ-ն ընդունել է Հռչակագիր, որով ճանաչել է

«Գաղութացված երկրներին անհապաղ անկախություն շնորհելու մասին» իրավունքը: Հայաստան պետության հարավ-արեւմտյան հատվածը՝ 121 հազար քառ.կ/մ տարածք, գաղութացված է Թուրքիայի եւ այլ պետությունների կողմից:

Մինչեւ իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումով.

Ոչ ոք կամայականորեն չպիտի զրկվի սեփականության իրավունքից, իրավունքների խախտմամբ պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունք ունի /ՄԱԿ-ի 10/12/1948թ. հռչակագիր 17 հոդ. ՄԻ եւ ՀԱ ԵԿ, ՀՀ ՍԴ 18,19 հոդ. ՀՀ քաղ. օր-ի 16,17 հոդ./: Ցեղասպանությունը հանցագործություն է, տես՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» Կոնվենցիա, ընդունված 1951թ. հունվարի 12-ին, եւ ՄԱԿ-ի «Պատերազմի հանցագործությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» Կոնվենցիա, ընդունված 1968 թ նոյեմբերի 26-ին:

ՄԱՍ 2-ՐԴ

Պետության առաջին դեմքի ընտրությունը իրականացվում է ուղիղ, կամ միջնորդավորված: ՀՀ նախագահը ընտրվել է ուղիղ ընտրությամբ: Ընտրված անձի հաստատումը, որպես երկրի բարձրագույն ղեկավարի, ապահովում է երկրի քաղաքացիների /հասարակության/ միջազգային եւ միջպետական իրավունքները՝ համաձայն միջազգայնորեն ընդունված հռչակագրերի, ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից ընդունված իրավական նորմերի, իր կառավարման երկրում օրենսդիր, գործադիր, դատական եւ անվտանգության մարմիններ ձեւավորելու եւ ղեկավարելու միջոցով:

ՀՀ անկախությունից առ այսօր ՀՀ երեք նախագահների քաղաքական օրակարգում բացակայել է հայրենատիրության խնդիրը՝ հիմնված 1920թ. Նոյեմբերի 22-ին ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի վրա: ՀՀ նախագահը կամովին ԹՈՂՆՈՒՄ Է, ԶԻՋՈՒՄ Է, ՓՈԽԱՆՑՈՒՄ Է սերունդներին՝ «ավագներին եւ կրտսերներին»:

2011թ. հուլիսին 23-ին Հայաստանի Հանրապետության Նախագահը, Ծաղկաձորում երիտասարդության հետ հանդիպման ժամանակ, հանդես եկավ հայտարարություն-ուղերձով. հայրենատիրության պահանջը սերունդներին՝ իրավահաջորդներին ԹՈՂՆԵԼՈՒ, ԶԻՋԵԼՈՒ, ՓՈԽԱՆՑԵԼՈՒ մասին, արվել է հրապարակային, հանրությանը, ողջ աշխարհին մատչելի, հասանելի միջոցով, այն է՝ ԶԼՄ-ներով:

ՀՀ նախագահի 2011թ. հուլիսի 23-ին Ծաղկաձորում կատարած յուրատեսակ հայտարարություն-ուղերձը չի հակասում եւ համահունչ է, /ՀՀ ՍԴ 55 հոդ.1-ին մասին/, ՀՀ նախագահը լիազորված է ուղերձով դիմելու ժողովրդին /այսինքն ողջ հայությանը եւ ի լուր աշխարհի/:

ՀՀ նախագահի հայտարարություն-ուղերձը լինելով ՀՀ ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմնի հայտարարություն անձանց, քաղաքացիների որոշ խմբի՝ ցեղասպանվածների սերունդների-ժառանգների համար առաջ է բերում իրավունքներ եւ պարտավորություններ եւ այն ներառնում է խառը իրավունքի ոլորտ՝ վարչաիրավական եւ քաղաքացիական, /ՀՀ վարչ. օր-ի 2-3 հոդ.հոդ, 21 հոդ. ա/բ/ կետ: ՀՀ քաղ.օրի 1-ին հոդ.128 հոդ./:

Այսինքը ՀՀ նախագահն իրավատիրոջ **իր իրավունքը կամովին,** բայց մասնակիորեն ԶԻՋԵՑ, ՓՈԽԱՆՑԵՑ ցեղասպանվածների, հայրենազրկվածների սերունդներին, /ՀՀ քաղ.օրի 397հոդ 403 հոդ./, այն է՝ իրավատիրոջը, ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԻՆ:

Սույն հայտարարություն-ուղերձով ՀՀ նախագահը ճանաչում է Հայոց հայրենատիրության իրավունքը՝ Արեւմտյան Հայաստանի նկատմամբ: Սույն հայտարարություն-ուղերձով ՀՀ նախագահը եղեռնազարկ եղած, հայրենազրկված հայերի սերունդներին, որպես իրավատերերի, հանրորեն ՓՈԽԱՆՑԵՑ ստանձնելու իրավատիրոջ պահանջի իրավունքը Արեւմտյան Հայաստանի մասով:

ՄԱՍ 3-ՐԴ
Իրավունքի զիջում

ՀՀ նախագահը ՀՀ ՍԴ-ով ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար Վճռի պահանջատիրության լիազորություն չունի, սակայն ՀՀ նախագահը Հայոց էթնոգիտակցության մեջ ներկայանում է որպես հայության առաջնորդ: ՀՀ նախագահի այդ ձեւաչափով ունեցած լիազորությունները ՍԴ-ով ամրագրված չէ, ուստի ՀՀ նախագահը 2011թ. հուլիսի 23-ին Ծաղկաձորում կատարած իր յուրատեսակ հայտարարություն-ուղերձով չի գերազանցել իր ՍԴ լիազորությունները: Արեւմտյան Հայաստանի նկատմամբ պահանջատիրության եւ հայրենատիրության հարցը ՀՀ նախագահի օրակարգում չկա, հետեւապես ՀՀ նախագահը 2011թ. հուլիսի 23-ին Ծաղկաձորում կատարած իր յուրատեսակ հայտարարություն-ուղերձով չի գերազանցել իր ՍԴ լիազորությունները եւ որպես ՀՀ նախագահ իրավունք ուներ հանդես գալ հայտարարությամբ՝ ներկայացնելու ողջ հայությանը ՀՀ նախագահի եւ իշխանությունների դիրքորոշումը:

Իրավունքի զիջումը քաղաքացիական-իրավական հարաբերություն է, որն էլ թույլ է տալիս ղեկավարվել սովորույթով /ՀՀ քաղ. Օր-ի 7 հոդ./ գործարար /աշխատանքային/ շրջանառության սովորույթ է համարվում գործունեության որեւէ բնագավառում ձեւավորված եւ լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա որեւէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից:

Իրավունքի զիջումը ճանաչելու համար կիրառելի է նաեւ ԱՆԱԼՈԳԻԱՆ /ՀՀ քաղ. օր-ի 9 հոդ./: Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 1-ին հոդ. Նախատեսված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով, կամ կողմերի համաձայնությամբ եւ բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը: Անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կիրառվում է ԻՐԱՎՈՒՆՔԻ անալոգիա, ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից:

ՀՀ նախագահն ներկայացնում է Հայաստանը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը /ՀՀ ՍԴ 55 հոդ. 7-րդ կետ/: Հայրենատիրության պահանջը միջազգային, արտաքին հարաբերությունների ոլորտ է: Այսինքն, ՀՀ նախագահը՝ ՀՀ ՍԴ-ի համաձայն, իր լիազորությունների դաշտում է գործել, եւ պահանջատիրության իր իրավունքը Զիջել է, Փոխանցել է իրավատիրոջ սերունդներին:

Քաղաքացիական-իրավական հարաբերություններում գործարքները կնքվում են գրավոր, բանավոր եւ դրանք լինում են միակողմ, երկկողմ, բազմակողմ: Միակողմ գործարք է ինչպես կտակը, այնպես էլ պահանջի զիջումը /ՀՀ քաղ. Օր-ի 290 հոդ.397 հոդ./բանավոր գործարքները վավերացում չեն պահանջում:/ՀՀ քաղ.օրի 294 հոդ./:

Մահացածի գույքը /ժառանգությունը/ անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն անցնում է ժառանգներին /ՀՀ քաղ.օր-ի 1184 հոդ./: Ցեղասպանվածների ժառանգները մինչ օրս որեւէ գույք չեն ժառանգել եւ չեն կարողանում ժառանգել հայրենազրկված լինելու պատճառով:

Ցեղասպանվածների ժառանգները-սերունդները առավելապես ապրում են արտերկրում, հանդիսանում են այլ պետությունների քաղաքացիներ, հետեւապես նրանց ԱՆՁՆԱԿԱՆ օրենքը այդ երկրի օրենքն է, սակայն ՀՀ քաղ. օր-ի 1253-1256 հոդ.հոդ. համաձայն օտարերկրյա քաղաքացիների համար այս դեպքում գործում է այն երկրի օրենքը, որտեղ տեղի է ունեցել իրավահարաբերությունը: Այս դեպքում այն տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում: /ՀՀ քաղ.օրի.1288 հոդ./:

ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի, 2011թ. Ծաղկաձորում կատարած հայտարարություն-ուղերձով կամովին, մասնակիորեն զիջեց հայրենատիրության պահանջը սերունդներին, որը բխում է ՀՀ ՍԴ-Ի ՀՀ վարչարարության եւ քաղաքացիական օրենսդրության պահանջներից, այն օրինական է:

ՄԱՍ 4-ՐԴ
Զիջման իրավունքի ճանաչում

Չնայած ՀՀ ՍԴ 55 հոդ. նախագահի լիազորությունների մեջ հայտարարություն եզրույթով լիազորություն չի նշված, սակայն ՀՀ նախագահն իր լիազորություններն իրականացնելիս բազմիցս հանդես է եկել հայտարարություններով, ստորագրել է հայտարարություններ:

ՀՀ նախագահի հայտարարություն-ուղերձը յուրատեսակ իրավական ակտ է, որը հնարավորություն է ընձեռնում այլ շահագռգիռ կողմերին, այսինքն՝ սերունդներին-ժառանգներին ողջամիտ ժամկետի ընթացքում հանդես գալ, որպես Պատշաճ Կողմ հանրորեն ընդունելու, ստանձնելու, ներկայացնելու եւ կիրարկելու ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը այն մասով, որ մասով կատարվել է զիջումը եւ այն կյանքի կոչել ամբողջապես եւ վերջնական:

Հայրենատիրության խնդիրը հանդիսանում է ՀՀ պետության ընտրված նախագահի, իսկ մյուս կողմից՝ նույն պետության եւ այլ պետությունների հայ քաղաքացիների միջեւ պահանջի եւ դրա մասի կամ ամբողջի զիջման իրավահարաբերություն: Հայրենատիրության պահանջի խնդիրը ինքնաբերաբար գտնվում է նաեւ քաղաքացիական-իրավական դաշտում:

Քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ծագում են օրենքով եւ այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաեւ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեեւ օրենքով եւ այլ իրավական ակտով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ /ՀՀ քաղ.օր-ի 10 հոդ./:

ՀՀ քաղաքացիների կողմից ընտրված նախագահը կամովին մասամբ կամ ամբողջովին զիջվել, փոխանցվել է Հայոց հայրենատիրության պահանջի իրավունքը սերունդներին, եւ այն համաձայնությամբ ընդունվել է իրավատիրոջ սերունդների՝ իրավահաջորդների կողմից ի դեմս Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության /ՀՀ քաղ. օր-ի 1-ին եւ 397 հոդ.հոդ./:

ՄԱՍ 5-ՐԴ
Զիջված իրավունքի ընդունում

Օսմանյան, այնուհետեւ Հանրապետական Թուրքիայի կողմից զավթած բնիկ հայ ժողովրդի բնօրրանի տարածքներում, ծրագրած հանցագործության՝ ցեղասպանության հետեւանքով, հայ ազգաբնակչությունը ամբողջովին զրկվեց իր ողջ անշարժ եւ

շարժական գույքից եւ հազարամյակների ընթացքում ստեղծած մշակութային ժառանգության հիմնական մասից: Ցեղասպանված, հայրենազրկված Արեւմտյան Հայաստանի հայերի սերունդները-ժառանգները ինչպես ՀՀ սահմանների ներսում այնպես էլ դուրս մինչ օրս որեւէ Փոխհատուցում չեն ստացել:

Հիմնվելով 2011թ. հուլիսի 23-ին Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից Ծաղկաձորում հայտարարություն-ուղերձի վրա ցեղասպանված, հայրենազրկված Արեւմտյան Հայաստանի հայերի սերունդները-ժառանգները բնակվող ինչպես ՀՀ սահմանների ներսում, այնպես եվ նրանից դուրս, իրավասու էին հանրորեն ներկայացնել հայրենատիրության եւ իրավատիրոջ իրենց իրավունքը:

Արեւմտյան Հայաստանի հայերի սերունդները կամ նրանց որեւէ կառույց հիմնված ինչպես ՀՀ սահմանների ներսում այնպես եվ նրանից դուրս իրավասու էին հանրորեն ընդունել Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից Ծաղկաձորում հայտարարություն-ուղերձի միջոցով հանրորեն զիջված հայրենատիրության եւ իրավատիրոջ իրենց իրավունքը:

Օգտվելով ընձեռնված հնարավորությունից նաեւ գիտակցելով եւ հասկանալով, որ կարող է հայտնվի նաեւ մեկ այլ կողմ, ով կցանկանա վերցնել 2011թ. հուլիսի 23-ին Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից Ծաղկաձորում կատարած հայտարարություն-ուղերձից բխեցված իրավունքը, սակայն որպես դե յուրե եւ դե ֆակտո Պատշաճ Կողմ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը իր վրա վերցրեց միակողմանի պարտավորություն եւ ողջամիտ ժամկետներում սպասեց մինչեւ հայկական որեւէ կազմակերպություն հանրօեն հանդես կգա, որպես հանրորեն զիջված իրավունքի ընդունող կողմ:

2011թ.հուլիսի 23-ից մինչեւ առ 01 օգօստոս 2014 թ-ը որեւէ հայկական կառույց հանրորեն հանդես չեկավ, որպես ՀՀ նախագահի կողմից, հայտարարություն-ուղերձով զիջված իրավունքի ընդունող կողմ:

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը Հայաստանի Հանրապետության նախագահի Ծաղկաձորում 2011թ.հուլիսի 23-ին կատարած հայտարարություն-ուղերձից ինչպես առաջ, այնպես էլ հետո հանդիսացել է դե յուրե եւ դե ֆակտո շահագոգիռ կողմ: Գիտակցելով ընձեռնված հնարավորության պատմական ողջ պատասխանատվությունը՝ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը հանրորեն հայտարարում է՝

1. իր կողմից միակողմանիորեն ստանձնած պարտվորությունը՝ այն է սպասել ողջամիտ ժամկետ, մինչեւ հանրորեն կներկայա որեւէ հայկական կառույց եւ կստանձնի իրավատիրոջ իրավունքը, առ 01.09.2014 թ.լրացած:

2. Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության կողմից ընդունված եւ միջազգային օրենքների չհակասող ցանկացած եղանակով ու ձեւով հանդես գալ, որպես Պատշաճ Կողմ հանրորեն ներկայացնելու եւ կիրարկելու ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռն այն մասով, որ մասով կատարվել է զիջումը եւ կյանքի կոչել Իրավարար վճիռն ամբողջությամբ եւ վերջնական:

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն
Գերմանիա, Մայնց
01.08.2014 թ.

REPUBLIC OF WESTERN ARMENIA • ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՏԱՐԱՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ